

ըաւթքն

ւանդ. քուն մտանել. եւ այլ

Տեսող ամ̃ի, մեղայ քեզ խորհր
դովք բանիւ, եւ գործով. ջնջեա՛ զ
ձեռագիր յանցանաց իմոց եւ գըր
եա՛ զանունն իմ ՚ի դպրութ̃ կենաց
Քննող գաղտնեաց մեղայ քեզ.
կամաւ եւ ակամայ գիտութ̃բ եւ ան
գիտութ̃բ. Թողութ̃ի շնորհեա՛
մեղաւորիս զի ՚ի ծննդենէ ս̃բ ա
ւազանին մինչեւ զայսօր մեղուցե̃լ
եմ առաջի ա̃ծութ̃ե քո. զգայարա
նօք իմովք եւ ամ̃ անդամովք մարմնոյս.
Ամենախնամ տ̃ր դիր պահապան
աչաց իմոց զերկիւղ քո տ̃ր՝ մի՛ եւս
հայիլ յաւտար. եւ ականջաց իմոց մի՛
ախորժել լսել զբանս չարութ̃ե.
եւ բերանոյ իմոյ մի՛ խօսել զսնոտ̃ի.

սրտի իմոյ մի՛ խորհել զչարութիւն. ձեռաց իմոց մի՛ գործել զանօրէնութիւն. և ոտից իմոց մի՛ գնալ ի ճանապարհս անօրէնութեան, այլ ուղղեա զշարժումն սոցա լինել ըս պատուիրանաց քոց ամժ. և ո՛.

Հուր կենդանի Քս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ, զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց՝ և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո ՚ի սրտի իմում.

Իմաստութիւն Հօր Քս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յամ ժամ. Ի չար խորհրդոց՝ ի բանից և ի գործոց փրկեա զիս. և ողորմեա՛.

Կամեցող բարեաց Տէր կամարար՝ մի՛ թողուր զիս՝ ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա ինձ լինել

միշտ ըստ կմ̃յ քոց բարեսիրաց ե՛։
Թագաւոր երկնաւոր տուր ինձ զար
քայութի̃ քո՝ զոր խոստացար սի
րելեաց քոց. եւ զօրացո՛ զսիրտ իմ
ատել զմեղս՝ եւ սիրել զքեզ միայն՝
եւ առնել զկամս քո. եւ ողորմեա՛։

Խնամօղ արարածոց՝ պահեա՛ նշանաւ
խաչի քոյ զհոգի եւ զմարմին իմ ՚ի
պատրանաց մեղաց՝ ՚ի փորձութե̃ց
դիւաց՝ եւ ՚ի մարդոց անիրաւաց՝ եւ
յամ̃ վտանգից՝ հոգւոյ եւ մարմնոյ։

Պահապան ամե̃ Քս̃՝ աջ քո հո
վանի լիցի ՚ի վերայ իմ, ՚ի տուէ եւ ՚ի գի
շերի. ՚ի նստել ՚ի տան՝ ՚ի գնալ ՚ի ճա
նապարհ. ՚ի ննջել, եւ ՚ի յառնել՝ զի
մի երբէք սասանեցայց. եւ ող̃։

Ած̃ իմ, որ բանաս զձեռն քո եւ
լնուս զամ̃ արարածս ողորմութե̃
քով. քեզ յանձն առնեմ զանձն
իմ. դու հոգա՛ եւ պատրաստեա՛ ըզ
պէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ՝
յայսմհետէ մինչեւ յաւիտեան ե՛։

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո՛ զիս
՚ի չար սովորութե̃ց իմոց, ՚ի բարի
սովորութի̃. եւ բեւեռեա՛ ՚ի հոգի

ըկալն որ մահուն՝ և շնորհիւք
ն և զսէր աստուածութ
[illegible]
[illegible] ասցէ՝ և գործե
ցից զարդարութի. և ողորմեա՛.
Աղբիւր անմահութեն՝ աղբերաց
՚ի սրտէ իմէ զարտասուս աս
խարութեն ծպպտունկին.
ցից զմեղս անձին իմոյ
քան զեղանելն իմ յաշխարհս. Ե
Աւարգելից ողորմութեն՝ տալ. ե.բա
իմ ուղղափառ հաւատ ոյ և արին
ոծեալ՝ և ճ գալ առաքեալ.
ոյ հաղորդող՝ հրեշտակի բարւոյ
բերող ամենայն զեռ՝ քաղցրութ
ւանդել զհոգի իմ. և անխռով
[illegible] հարսուն այսոցն
որքեան ՚ի նենգոց [illegible] և ազգ.
Այս ճշմարիտ Վե՛ արժանաւոր
եա զհոգի իմ ուրախութեամբ ան
[illegible] փառաւորութ ՚ի կեա
[illegible] և հանգստ [illegible]

բարեաց յօժարաս արգելոց [illegible]
չև յօր մեծի գալստեան քոյ. Ո՛.
Դատաւոր արդար յորժամ
գաս փառօք Հ՟ր՝ դատել զկեն
դանիս և զմեռեալս. մի մտաներ
[illegible] ան Ը՟Դ ծառայի քում.
[illegible] զիս ՚ի յաւիտենական
հրոյն՝ և լ[illegible] ինձ զերանա
ւէտ կոչումն [illegible]
արքայութ՟եդ. և ողորմեա [illegible]
Ա՛մենողորմ Տ՟ր՝ ողորմեա [illegible]
ւատացելոց ՚ի քեզ. իմոց և օտա
րաց. ծանօթից և անծանօթից.
կենդանեաց և մեռելոց. շնորհեա
և թշնամեաց իմոց՝ և ատելեաց
թողութ՟ի որ առ իս յանցանացն.
և դարձո՛ զնոսա ՚ի չարեացն զոր
ունին վասն իմ, զի ողորմութ՟ե
քում արժանի եղիցին. և ողո՛.
Փառաւորեալ Տ՟ր՝ ընկալ զաղա
չանս ծառայիս քոյ՝ և կատարեա՛

ի բարի զխնդրուածսիմ. Բարե
խօսութե՟ սբ՟ուհւոյ Ածածնին՝ և
Յօհաննու Մկրտչին՝ և սբ՟յն Ստե
փաննոսի նախավկային՝ և սրբոյն
Գրիգորի մերոյ Լուսաւորչին.
Եւ սբ՟ց Առաքելոց՝ Մրգրէից՝
Վարդապետաց՝ Մարտիրոսաց՝
և սրբոց Հայրապետաց՝ Ճգնա
ւորաց՝ Կուսանաց՝ միանձանց՝ և
ամ սրբոց քոց՝ Երկնաւորաց և
երկրաւորաց. և քեզ փառք և եր
կրպագութիւն անբաժանելի մի
Երրորդութեանդ յաւիտեանս
յաւիտենից. Ամէն: Եւ լցի
պահպանեան [illegible]





[illegible]
ակ ՚ի մարիամայ [illegible]
մատնեցար. ըմբռնեցար. [illegible]
րեցար. խաչեցար, և թաղեցար.
յարեար ՚ի մեռելոց՝ և համբար
ձար փառօք առ հայր. Զարթո՛
զզօրութի. քո և եկ ՚ի կեցուցանել
զշինս արեան քոյ տէր. և մի տար
գերել սատնյի զմեզ փրկեալքս. և
մի տար լինել բնակութի. չարին՝
զտաճար անուանդ քում սրբոյ.
և մի՛ զկնքեալսդ քեզ մարմինս և ան

դամ ՚թողուր ՚ի կոխումն եւ ՚ի կա
տականս չարին. Ողգթա՛ ՚ի քո
արարածս՝ արարչական սիրով քով.
Տէր ողորմեա մեզ. զի ՚ի խաչ քո
պարծելով պարծեցաք. Եւ սա
պահելով պահեսցէ զմեզ յերեւե
լի եւ յաներեւոյթ թշնամւոյն. եւ յ
ցի պահապան [illegible].
Զար իշխանին [illegible] ծին.
որք ընդ ծառայս քո մարտընչին.
Երեւելով նշան խաչին.
աներեւոյթք եղծանեսցին.



Սուրբ Աւետարանս որ ըստ Մատթէոսի.

Ի մինչ դեռ անցանէր ը̅
այն Յս̅ զհետ եղեն նր̅ կոյրք
բ̅, աղաղակէին՝ եւ ասէին, ո
ղորմեաց մեզ որդի դաւթի. Եւ
իբրեւ եկն ի տուն. մատեան առ
նա կոյրքն եւ ասէ ցնոսա Յս̅, հա
ւատա՞յք եթէ կարող եմ առնել
ձեզ զայդ. ասեն ցնա՝ այո տ̅ր.
Յայնժամ մերձեցաւ յաչս նց̅ եւ
ասէ. ը̅ս հաւատոց ձերոց եղիցի
ձեզ. եւ բացան աչք նց̅. Եւ սաս
տեաց նց̅ Յս̅ եւ ասէ. զգոյշ կացէք
մի՛ ոք գիտասցէ. Եւ նոքա ելեալ
համբաւեցին զնա ը̅ ամ̅ երկիրն ը̅
այն. Եւ յելանելն նց̅ արտաքս՝
ահա մատուցին առ նա զայր մի
համր դիւահար. Եւ յելանելն
դիւին խօսեցաւ համրն, եւ զարմա
ցան ժողովուրդքն՝ եւ ասեն, թէ

եւ ոչ երբէք երեւեցաւ այսպիսի
ինչ յԻսրլի։ Եւ փարիսեցիքն ասէ
ին իշխանաւն դիւաց հանէ զդեւս։

[illegible]

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի։

Եւ ել լուր նր՟ ընդ ամ՟ կողմն՟ գալիլեացւոց։ Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն եկին ի տուն սիմոնի եւ անդրեայ յակոբու եւ յոհաննու հանդերձ։ Եւ զոքանչ սիմոնի դնէր ջերմացեալ. եւ վաղվաղակի ասեն ցնա վս՟ նր՟։ Եւ մատուցեալ յարոյց զնա կալեալ զձեռանէ նր՟, եւ թողեալ զնա տենդն եւ պաշտէր զնս՟։ Եւ ընդ երեկոյս եղեալ ի մտանել արեգականն. բերէին առ նա զամ՟ հիւանդս եւ զդիւահարս։ Եւ էր ամ՟ քաղքն ժողովեալ առ դրանն։ Եւ բժշկեաց զբազում հիւանդս ի պէսպէս ախտից, եւ դեւս բզ՟մս եհան, և ոչ տայր խօսել դիւացն. զի գիտէին զնա [illegible] Ք̃սն է:

[illegible]

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու:

Եւ եղև ընդ աւուրսն յայնոսիկ ել ի լեառն կալ յաղօթս, և հանէր զգիշերն ի գլուխ յաղօթս այ̃: Եւ իբրև այգ եղև կոչեաց զաշակերտսն իւր և ընտրեաց ի նոցանէ երկոտասանս. զորս և առաքեալս անուանեաց: Զսիմոն՝ զոր և պետրոս անուանեաց, և զանդրէաս զեղբայր նորին, և զյակոբոս և զյօհաննէս. և զփիլիպպոս. և զբարթողիմէոս: Եւ զմատթէոս. և զթովմաս. և զյակոբոս ալփեայ, և զսիմոն զկոչեցեալն նախանձայոյզ: Եւ զյուդա յակոբեայ, և զյուդա իսկարիովտացի, որ եղև իսկ մատնիչ: Եւ իջեալ նոքօք հանդերձ ի տեղի մի տափարակ, և ժողով աշակերտացն նր̃ և բազմ մութի յոյժ ժողովրդեանն յամ հրէաստանէ և յԵմէ և յայնմ կողմանէ՝ և՛ի ծովեզերէն տիւրոսի և սիդոնի։ Որք եկին լսել ՚ի նմանէ և բժշկիլ ՚ի հիւանդութէ իւրեանց, և նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին։ Եւ ժողովուրդն խնդրէր մերձենալ ՚ի նա. զի զօրութի բազում ելանէր ՚ի նմանէ և բժշկէր [illegible] զամենեսեան։

……

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յոհաննու։

Յետ այսորիկ տօնէր հրէից. և ել Յս յԵմ. Եւ էր յԵմ ՚ի պրոպատիկէ աւազանին որ կոչիւր եբրայեցերէն բեթհեզդայ Ե սրահ։ Յորս անկէլ դնիւր բազմութի յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որք ակն ունէին ջրոյն յուզելոյ։ Եւ հրեշտակ տն իջանէր ըստ ժամանակի յաւազանն, և յուզէր զջուրն. և որ նախ ՚ի շարժումն ջուրցն իջանէր յաւազանն, բժշկիւր, ինչ ունելով

զինչ ցաւս հիւանդութե։ Եւ անդ էր
այրմի, որոյ Լ եւ Ը ամ էր ՚ի հիւան
դութե իւրում։ Զնա իբրեւ ե
տես Յս. ւի անկեալ դնիր. եւ
գիտացեալ թէ բազում ժմնկքէն
այնու հետեւ. ասէ ցնա՝ կամի՞ս
ողջ լինել, Պատասխանի ետ նմա
հիւանդն. Տէր, մարդ ոչ ունիմ թէ
յորժամ ջուրքն յուզիցին, արկցէ
զիս յաւազանն. եւ մինչ ես գան
գաղիմ, այլ ոք քան զիս յառաջա
գոյն իջանէ։ Ասէ ցնա Յս̄ արի,
առ զմահիճս եւ գնա։ Եւ ողջացաւ
այրն. եւ յարեաւ էառ զմահիճս
իւր եւ շրջէր. եւ էր շաբաթ յա
ւուրն յայնմիկ. Եւ լիցի պահա
պան ըծ———— այսմ դրոոսիսին ամէ,

Մաղթանք զօրաւորք ընդդէմ արհաւիրաց գիշերայնոց· Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ։ Ժ. Բ.

Անեղ քաղցրութիւն՝ որ ամենահզօր, զդառնացեալս զաղաչանս։ [illegible] գթութիւն՝ առապատկառեալս դիմօք։ Փարատեա՛ ամենապարգև զամօթական տխրութիւնս։ Բարձ յինէն ողորմած՝ զանըմբերելի ծանրութիւնս։ Ընկլուզեա՛ հնարաւոր՝ զմահացու կրթութիւնս։ Ըւարեա՛ միջո յաղթօղ զխաւարային հաճութիւնս։ Ընծայարեա՛ վերնային, զմիջնոյն մառախուղ։ Անքեա՛ կեցուցիչ՝ զկորուսելին ընթացմունս։ Ցրուեա՛ ծածկատես զմեռնողին չարգթմունս։ Խորտակեա՛ անքննին զմարտողին [illegible] [illegible]րեա՛ քով անճառմբք՝ զլուսանցոյց երդ յարկիս։ Պարփակեա՛ քով ձեռամբ՝ զառաստաղ տաճարիս

Խաչագրեա քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս։ Կերպացի՛ զքո նշանդ՝ ՚ի հետս ելից մաղթողիս։ Ամրացո՛ քո աջովդ զհանգստեան խշտիս։ Մաքրեսցես ՚ի հաղբից զծածկարան անկողնոյս։ Պահեսցես քո կամօքդ զտառապեալ անձըն հոգւոյս։ Անխարդախ արասցես զքո շնորհ͞ել շունչ մարմնոյս։ Կացուսցես շրջափակ զպարզօրուդ երկնայնոյ։ Կարգեսցես ՚ի գիրս ը͞գ էմ ղիւայն դասու։ Ո՛ւր հանգիստ բերկրութ͞ե՝ մահահանգոյնս նիրհման ՚ի խորու͞ե գիշերիս։ Բարեխօսու͞ք և հայցւածովք սրբուհւոյ ա͞ծածնին՝ և ա͞մ ընտրելոց։ Ամփոփել պարուրեալ ընդ պատուհան անսութ͞եց, զգայարանայս իմաստից։ Անզարհուրելի զերազմամբ, ՚ի ծփական խռովութ͞եց, կենցաղական զբաղմանց, անրջական երազոց։ Խօլականաց ցնորից։ Յիշատակաւ քո

յուսոյդ, անմխասելի պաշտպան
եալ: Եւ սթափեալ վերստին ՚ի
ննջմանէ ծանրութեցս: Ամենա
զգաստ արթնութբ: Հոգենորոգ
զուարթութբ, ՚ի քեզ արձանաց
էլ: Օ այս ձայն մաղթանաց, բուր
մունք հոտատարաց: Ընդ ամենայ հ
նեալ [illegible] փառաց Ամենակալ
փառաբանողաց: երկնագումար
խմբից երգակցեալ յերկինս ա
ռաքէլ: Ով դու փառաւորեալդ
յամենայն արարածոց: յաւէտ:
Եւ լիցի պահապան [illegible]:

Աղօթք զօրաւորք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն: ԽԲ.

Որդի Այ կենդանւոյ, որհ
նեալդ յամիտ: Հօրդ ահա
ւորի, անքննելի ծնունդ որ տէրա
բանեայ առ՚ի քէն եռանձնեն որ՚ի ծա
գել անստուեր նշուլից ողորմու
թէ քոյ փառաւաց: Հալին մեղք, հա
լածին դեւք: Ջնջին յանցանք:
Խզին կապանք: Խորտակին շղթ

թայք․ Կենդանածընին մահացեալք։ Բժշկին հարուածք․ Ողջանան վէրք․ Բառնին ապականութ՟իք․ Տեղիտան տխրութ՟իք․ Լռահանջքին հեծութ՟իք․ Փախնու խաւարն։ Մեկնի մէգն․ Մերժի մառախուղն։ Փարատի մռայլն․ Սպառի աղջամուղջըն․ Վերանայ մութըն։ Գնայ գիշերն․ Տարագրի տագնապն․ Չքանան չարիքն․ Հալածին յուսահատութ՟իք։ Եւ թ՟գր է ձեռաքս։ Ամենակալ քաւիչդ ամ՟, որ ոչ եկիր կորուսանել զմարդկան հոգիս, այլ կեցուցանել։ Թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութ՟եդ քո․ Զի դու միայն ես երկնի անճառ, և երկրի անզըննին․ Խաւարք գոյից և յետըը ծագաց Տ՟հի։ Սկիզբն ամ՟ի և յամ՟ի, ամ՟իւ լրման, օրհնեալդ ՚ի բարձունս։ Եւ քեզ վայելէ Է Հօր Հոգւոյդ սրբոյ փառք յաւէ՛․

ս՟բ-ն

ամ. ամի.



Բ. ղօթք Մ՝եսրօպայ Վարդապետի.

Բարեբանեալ եւ փառաւորեալ ամենաս՟բ կոյս ԱԾածին Մարիամ, անկանիմ առ՟ջև քո. օրանամ զքերանէ իմ չա՟րչար հեծեծանօք եւ աղաչեմ. ամենաս՟բ ա՟ծածին բարեխօսեա՛ եւ լեր պահապան [illegible] ԱԾ յօգնել ինձ նայեաց եւ Տ՟ր յօգնել ինձ փութա. Տուր զօրութի ծ՟առյի քոյ կեցո՛ զորդի աղախ

Նոյզգոյն․ եւ որժ աախս ճշյան զօրաւէ



Է գառն առաքելոց ԺԲ·





Անմահ Պաւղոսին հըզօ   րի.
որ միշտ զենեալ և կենդա   նի.
երկոտասան գառանցդ խըմ   բի.
ձեզ այս աղերս մատուցա   նի:
Ս͞բ պետրոսի և Անդրէ   ի.
եղբարց երկու նախակո   չի.
Յակոբոսի Յօհաննի   սի.
[illegible] որդիքըն զէբե   թի:
Փիլիպպոսի Բարդուղիմէոսի.
Թովմասի և Մատթէո   սի.
Յակոբ ալփէայ Թաթէո   սի.
Շմաւօնի Մատաթէ   ի.
Երկոտասան Առաքել   ոց.
ի Ք͞Է պատկե   րոց.
[illegible]
[illegible]
Եղիցի պահապան ողորմելի:



յովհաննէս դու ամ[illegible] դէի·

քարոզաւոյ յանձապատի·

Ընծող Գլուխն անարատու·
վըկայ եղէր դու կրկնակի:
Բարեխօսութ՟ սրբ՟ց մրգրէիցն
Մովսէսի և Ահարոնի·Նաթանայ
ևսամուէլի·դաւթի ամովսայ մի
քիայ· աբդիու յովնանու նաւու
մայ ը՟ ամբակումի·սոփոնիայ և ան
գէի·մաղաքիայ և դանիէլի·զա
քարիայ ը՟ եզեկիէլի·և ամ՟ սրբ՟ց
դասի·պահեսցի և պահպանեսցի
ծառայս Ա՟յ ղօղոսին :
Ապրեցո զիս տ՟ր ի մարդոյ չարէ

յաւէտ անհրաւէ փրկեա՛ զես
աղօթիւք Գրիգորի Լուսաւորչի ամէն.



Ա. Հայր սբ. Տէրն Գրիգոր լուսաւորիչն
Խնդրեմք ի քէն հայր պատուա
կան. լուսաւորիչ ազգի մարդկան.
Տէր սբ. Գրիգոր պետ պարթեւեն
լեր մեզ պարիսպ և օգնական.

ծընող բարի ի մեզ գթա.
զցրուեալ որդիսքո ժողովեա.
ի բանսարկուէն զմեզ փրկեա.
և ի բարին առաջնորդեա.

Այլև բարէխօսութ̃բ, ՅԺԸ̃ հայրապետացն. Ճ̃, հայրապետացն Ճ, Ծ՛ հայրապետացն, և ևս Արիստակիսի Վրթանիսի. Յուսկանն. Գրիգորիսի. Մեծին Ներսիսի. Սահակայ. Դանիէլի. և Խադայ. Մեսրոպայ վարդապետին. Գրիգորի Նարեկացւոյն. և Ներսիսի կլայեցւոյն. պահեալ մեզ ողորմի.

Բարէխօսութ̃բ և շնորհօք
այտարին. Իւր ս̃բ Նշանին. և

որին. որ ի լեառն վարագ
ց նորին շնորհաց որ ի մեզ

նբարբառ բարեխօսին • սրբոյ նշանաց խաչա
րփիահրաշ երկնային պայծառափայլութե

և Յ̃ամ ամենողջերս ողջման և Երևման Նշա
նս ընտ.' ոյն սրբոյ աւրա Հնորին որ 'ի վ̃ը

բևեռեցաւ խաչակեցելոց • պա
հապան և այցելու եղիցի ծառայիս
Յաց մեզ Տէր ողորմութիւ քո՛
և գթութիւ քո տուր մեզ ամէն •



Աղօթս առ Երկնային Զօրսն։

Անեղ անմահ արքային ապասաւորք անմարմինք՝ վերին զօրացն դասապետութիւնք. Աթոռք՝ Քերովբէք, և Սերովբէք։ Տէրութիւնք. Զօրութիւնք, և Իշխանութիւնք։ Պետութիւնք Հրեշտակապետք [illegible] րեշտակք․ ողորմ

Միքայէլ և Գաբրիէլ․ Պետք
վերնական զօրացն դասուց․ որք
անլռելի ձայնիւ փառաբանու և
մատուցանէք ամենամէ̃ Երրոր
դութ̃ն․ և երեքսրբեան ձայնիւ
եղանակէք զերգս ասելով․ ողոր
մեա՛ դու ստեղծեր մի՛ կորուսա
ներ․ զգործս ձեռաց քոց մի՛ ան
տես առներ․ Օգնական և պա
հապան լերուք ծառայիս Ա̃Յ․
ողորմին․ և փրկեցէք յամ
վտանգից և՛ի փորձութեանց
հոգւոյ և մարմնոյ․ Ա̃մն․





Աղերս առ Տէրն Ստեփաննոս նախավկայն․
՚Ի քէն հայցեմք արտասուագին․
Նախավկայդ մեր առաջին․
Որ ստեփաննոս բացող երկնին․
Տեսող զՔս յաջմէ ծնօղին․
Լեր բարեխօս արեամբ քոյին․
Առ մեզ հանգիստ ՚ի յանկողնին․
Արթուն լինիլ առաւօտին․
Բարեբանել զլոյսն անքննին․
Եւ լեր պահապան [illegible]․

Աղօթք վասն զաւակ ծնանելոյ․

Ած բոլորից։ Անճառ մեծութի։ Ահզօր զօրութի։ Ամենակարող բարերարութիւն։ Դու քեզ հայր ամ̃ աձն առողջի։ Լսեաց ի պաղատանս հաւատչեան ձայնի քոյոց ծառայից եւ աղախնեաց. տ̃ղ աննայի լուսր հեծութեն. եւ տուր նմա զմեծն ամուեալը. եւ յոգւոյ կիծայ եւ անձնայի զողջնօրհնեալ Ա̃ա բեամ. զագարքայի եւ եղջերուբեթի պարգ. եւ եցեր զաւակ զո̃. Սարայեան եւ զմնացեալսն Յովհաննեաս. Սրն ողորմութեն քո պարգեւեամ եւ տուր սոցա զաւակ բարի ծառայիցս քո ։





Եւ ասէ աբրաամ ցպատա
նիս իւր՝ Նստարուք դուք
այդր հանդերձ իշովդ. Ես և
պատանեակս երթիցուք մինչև
յանդր. և երկիրպագցուք. և
դարձցուք առ ձեզ. Եւ էառ
աբրաամ ըզփայտ ողջակիզին.

նուկդ՝ և մի ինչ առներ դմա զի
այժմ գիտացի թէ՝ երկիւղած ես
դու յիս և ոչ խնայեցեր յորդի
քո սիրելւոյ վասն իմ։ Համբարձ Աբ
րահամ զաչս իւր և ետես և ահա
խոյ մի կախեալ կայր զծառոյն սա
բեկայ զեղջերացն։ և գնաց Աբ
րահամ և էառ զխոյն. և եհան
զնա յողջակէզ փոխանակ Իսահա
կայ որդւոյ իւրոյ։ Եւ կոչեաց
զանուն տեղւոյն այնորիկ Տէր
ետես. զի ասիցեն մինչև ցայսօր
՚ի լերինն յայնմիկ Տր երևեցաւ։
և Աբրահամ ծերացել հանգեաւ
խաղաղութբ. Բարեխօսութբ
եա. նահապետացն պահեա և փրկ
կեա զծառայս քո։

Աղօթք չար նազարի և չար լեզուի։

ՏՐ ԱԾ մարդասէր. մարդասի
րի [illegible] Սերգի. դու ես պահա
պան և օգնական յուսացելոց ՚ի

քեզ։ Պ[illegible] ողորմութ̃ քո՛ ի ծառայս
քո․ և պահեա անփորձ՛ ի չարէ ան
[illegible] յորոգայթէ երևելի և
աներևութ թշնամոյն․ պահեա՛ ի
՚ր աչէչ մի չար լեզուէ՛ խորդ և
ամ̃ հարուածոց երևելեաց և
աներևութից պահեա և փրկեա
զծառայս քո [illegible] .



Աղօթք առ Սբ Զօրաւորն Գբր

ԲԱՐԵԽՕՍՈՒԹեամբ Սբ Զօ
րավարացն, Երկնաւոր Զօրավարին ·
Գէորգայ զօրավարին · Մերկուրիոսի
Զինուորին · Սարգսի Զօրավարին և
որդւոյ նորա Մարտիրոսին · Թէոդորէի
Զօրավարին · և Է, զինուորացն Բասոսի
Եւսեբէ Եւտիքէ և Բասիլիքեայ · Սբն
Մինասայ · Եւմոգինեայ և Գորգոնոսի · և
Սբց Ղեւոնդեանց · Ոսկեանց և Սուքիասեանց ·
և Խարիթեանց · և այլ ամ Սրբոց բարեխօ
սութեամբ պահեա զծառայն քո ղողոնին ·